«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՌԻՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Առարկան՝ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»

Հետազոտող ուսուցիչ՝ Գրետա Ալբերտի Ավագյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ---------- 5

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ---------- 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը։ Մարդն իր ամբողջ գիտակցական կյանքի ընթացքում սովորում է, որ տարիքում էլ որ լինի, սակայն հենքային կրթությունը ստանում է դպրոցում։ Այդ կրթությունն ուղեկցում է նրան ողջ գիտակից կյանքում, երբ տեսական գիտելիքների զինանոցը փոխակերպվում է գործնականի։ Կան գիտելիքներ, որոնք պետք են գալիս ավելի հասուն տարիքում, ինչն էլ բացահայտում է մարդու կարողունակությունը և նրա ստացած գիտելիքների ամբողջականությունը։ Սակայն «Տեխնոլոգիա»-ն այն բացառիկ առարկաներից է, որի ընթացքում տեսական գիտելիքներն անմիջականորեն զուգակցվում են գործնական աշխատանքներով։ Երեխան միաժամանակ լսում, տեսնում և կատարում է գործողություններ, ինչն էլ ամրապնդում է նրա գիտելիքները։ Եվ ինչպես ժողովուրդն է ասում՝ «Լավ է մեկ անգամ տեսնել, քան հարյուր անգամ լսել», նաև ավելացրել է «Քաղցածին ձուկ տվեք և մեկ օր կկերակրես նրան։ Տվեք նրան ձկնորսական գավազան, սովորեցրեք նրան ձկնորսություն, և դուք նրան կկերակրեք ամբողջ կյանքի ընթացքում»։ Ուստի, կարծում եմ, որ այնպես, ինչպես յուրաքանչյուր աշակերտի համար անհրաժեշտ է սեփական լեզվի բացարձակ իմացությունը, այնպես էլ այս առարկայի իմացությունն անհրաժեշտ է նրան ամբողջ կյանքում արժանավայել ապրելու, կյանքը գեղեցկացնելու և արվեստին ավելի մոտ և ներդաշնակ լինելու համար։

Մարդուն հմուտ են դարձնում ոչ թե յուրացրած գիտելիքները, այլ ըստ անհրաժեշտության դրանք կիրառելու կարողությունները։ Ուստի, յուրաքանչյուր բնագավառում հմտանալու համար օգնության են գալիս գործնական աշխատանքները, որոնց բազմակի կրկնությունները նրան դարձնում են հմուտ և բազմափորձ, ինչով էլ պայմանավորված է թեմայի **ընտրությունն** ու **արդիականությունը**։

Ուսուցման ընթացքում գործնական աշխատանքներն ապահովվում են գործնական մեթոդների կիրառմամբ, որոնք նպաստում են սովորողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորմանն և կատարելագործմանը։

Թեմայի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել գործնական աշխատանքների իրականացման առանձնահատկությունները «Տեխնոլոգիա» առարկայի դասավանդման ընթացքում։

Նպատակից ելնելով առաջ են քաշվել հետևյալ **խնդիրները.**

- Իրականացնել թեմայի շուրջ գրականության վերլուծություն,
- Ներկայացնել գործնական աշխատանքների կազմակերպման ու իրականացման առանձնահատկությունները,
- Ուսումնասիրել գործնական աշխատանքների ընթացքում հանդիպող խնդիրները՝ հաշվի առնելով սովորողների կարողություններն ու անհատական առանձնահատկությունները։

Հետազոտության ընթացքում կիրառվել են հետևյալ մեթոդները.

- Վերլուծություն,
- Գործնական աշխատանք։

Հետազոտության կառուցվածքը։ Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական մասից, գործնական առաջադրանքներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից։ Համակարգչային շարվածքով կազմում է 21 էջ։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ «ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի սովորողներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական գիտելիքները մարդուն տրվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Գործնականում առաջադրված խնդիրներն են, որ լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Ավելին, այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում: Սովորողին պետք է հասկանալի դարձնել ցանկացած գիտելիքի տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը: Այսինքն՝ յուրաքանչյուր տեսական գիտելիքի գործնական կիրառումը նպաստում է առօրյա կյանքի բարելավմանը:

Սովորողների մեջ գործնական կարողությունների առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև սովորողների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս: Անհրաժեշտ է « տեսանելին տրամադրել աչքերին, լսելին՝ ականջներին, շոշափելին՝ մատներին» :

Ուսուցման արդյունքների ստուգումը յուրաքանչյուր սովորողի մոտ անհատական բնույթ է կրում, ինչը ժամանակատար գործընթաց է, հատկապես կախված սովորողի խառնվածքից /ամաչկոտ, վախկոտ/, արդյունքները կարող են լինել ոչ հավաստի: Ուստի ուսուցչին օգնության են գալիս գործնական կամ խմբային աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս ստուգելու մի քանի սովորողի գիտելիքները միաժամանակ:

Գործնական աշխատանքները, սովորաբար, կրում են ընդհանրացնող բնույթ: Վարժություններն իրենց բնույթով բաժանվում են բանավոր, գրավոր, գրաֆիկական, ուսումնական-աշխատանքային վարժությունների, գործնական աշխատանքների: Դրանցից յուրաքանչյուրն իրականացնելիս սովորողները կատարում են մտավոր և գործնական աշխատանքներ, որոնք փոխկապակցվում են՝ կանխանշած նպատակին հասնելու համար: Վերջիններս կատարվում են ուսումնական բոլոր առարկաներից, ուսուցման գործընթացի բոլոր փուլերում: Բոլոր տեսակի վարժությունների բնույթը և մեթոդիկան կախում ունի տվյալ ուսումնական առարկայի առանձնահատկություններից: Գործնական մեթոդը կարելի է իրագործել հետևյալ հնարների գործադրմամբ

1. առաջադրանքի պլանավորում
2. առաջադրանքի կատարում,
3. կատարման ընթացքի խթանում,
4. վերահսկողություն,
5.կատարված գործնական աշխատանքի արդյունքների վերլուծություն, դժվարությունների հայտնաբերում,
6.բարելավման ուղիների առաջադրում,
7.գնահատում:

Գործնական աշխատանքները նախատեսված են սովորողի ձեռք բերած գիտելիքների կիրառության կարողությունը զարգացնելու նպատակով: Ելնելով ուսումնական առարկայի առանձնահատկություններից գործնական աշխատանքները կարող են լինել տարբեր.

1.տեղանքում կողմնորոշվելու,

2.գործիքով աշխատելու,

3.լաբորատոր պայմաններում փորձարկելու,

4. մոդելավորման,

5.ուրվագծման,

6.նոր տեխնոլոգիաների յուրացման,

7.այլ:

Միայն տեսական գիտելիքները բավարար չեն, և սովորողները անգիր անելով տեսական նյութը չեն կարողանում այն ընկալել և վերածել գործնական գիտելիքների, ինչն էլ բացառում է այդ գիտելիքների կիրառելիությունը առօրյա կյանքում: Սովորողին պետք է հասկանալի դարձնել տեսական հասկացությունների իմացության կարևորությունն ու նշանակությունը մարդու պրակտիկ գործունեության մեջ: Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը: Այս պարագայում է, որ օգնության են գալիս խմբային և գործնական աշխատանքները, որոնք հնարավորություն են տալիս տեսական գիտելիքները գործնականում կիրառելու, դրանք դասապրոցեսի ընթացքում դասընկերների օգնությամբ լրացնելու, համալրելու, լիարժեք դարձնելու համար;

Գործնական աշխատանքի նպատակի ձևակերպման ժամանակ ուսուցիչը պետք է ուղենիշ դարձնի այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք պետք է ձևավորվեն կամ կատարելագործվեն դասի ընթացքում: Արդյունքում սովորողի գիտելիքները կդառնան լիարժեք: Գործնական աշխատանքի նպատակը կարող է լինել ծավալուն / կապված նյութի հետ /, ուստի այն կարելի է իրականացնել մի քանի դասի ընթացքում:

Գործնական աշխատանքն իրականացնելիս ուսուցիչը պետք է հստակ նշի նպատակը, խնդիրները, գործողությունների շարքը, ցուցադրի անհրաժեշտ պարագաները, ամրապնդի գործիքների հետ աշխատանքի ձևերը, հստակեցնի թեմային համապատասխան սանիտարահիգիենիկ պահանջները և անվտանգության կանոնները:

Ուսումնական առարկայի բովանդակության առանձնահատկություններով են պայմանավորվում տեսության և պրակտիկայի կապերի ձևերը: Այդ կապերը բացահայտելու ավանդական միջոց են (նաև գործնական աշխատանքի տեսակ) էքսկուրսիաները, զանազան լաբորատոր աշխատանքները, որոշակի պրակտիկ գործողությունների իրականացում պահանջող հանձնարարություններն ու առաջադրանքները (իրերի և նրանց մոդելների պատրաստում, ասեղնագործություն, ձևելու և կարելու իրականացում, կենցաղային իրավիճակներում հաշվարկների կատարում, բնական որևէ երևույթի դիտում ու մեկնաբանում և այլն): Գործնական աշխատանքները կազմակերպելիս պետք է ոչ միայն չանտեսել

սովորողների անձնական փորձը, այլ հենվելով դրա վրա՝ անհրաժեշտ է աստիճանական կարգով գնալ դեպի պարզից բարդը:

Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է

- ապահովի անվտանգ աշխատատեղ,
- նախապատրաստական աշխատանք տանի սովորողների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- ապահովի սովորողներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ, մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,
- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը,
- ապահովի հետադարձ կապ:

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ, այլ պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը: Նման մոտեցումը կօժանդակի սովորողների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

Տեխնոլոգիայի գործնական աշխատանքներն իրենց էությամբ, բնույթով և նպատակով սերտ կապված են պրակտիկ գործունեության հետ: Սովորողը պետք է կարողանա կատարել իրեն տրված առաջադրանքը, դնի կոնկրետ նպատակ, պլանավորի իր անելիքը, մշակի դրանց հասնելու ուղիները, , ստանա արդյունք և կատարի եզրահանգում /այս պարագան կնպաստի սովորողների ստեղծագործական ու ճանաչողական կարողությունների զարգացմանը/:

Գործնական աշխատանքը կազմելիս ուսուցիչը պետք է ուշադրություն դարձնի, որ այն համապատասխանի սովորողի գիտելիքներին ու կարողություններին՝

- չպետք է լինի այնքան հեշտ, որ ձանձրացնի նրան,
- չպետք է լինի այնքան բարդ, որ դժվարություններ և խնդիրներ ստեղծի սովորողի համար:

Գործնական աշխատանքների ժամանակ սովորողը պետք է ընտրության հնարավորություն ունենա, կարողանա ինքնուրույն առաջադրանքներ կատարել, որը կխթանի աշակերտի ստողծագործական մտածողությունը, երևակայությունը, իմացական հետաքրքրությունը: Գործնական աշխատանքն իրականացնելը ավելի արդյունավետ կլինի, եթե այն անցկացվի խմբային ձևով:

Խմբային գործնական աշխատանքն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը՝ նպաստելով սովորողների համագործակցային և հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը: Խմբային գործնական աշխատանքները աշակերտի մոտ զարգացնում են կարևոր մարդկային հատկանիշներ՝ համագործակցել, լսել և հարգել, հաշվի առնել դիմացինի կարծիքը, քննարկել, գալ ընդհանուր եզրահանգման, կատարել ընտրություն առաջադրված տարբերակների մեջ, պատասխանատվություն կրել խմբի համար և այլն: Խմբային գործնական աշխատանք կատարելու ժամանակ նաև պարզ երևում է խմբի անդամների միասնական, նպատակային գործողությունները: Քանի որ խմբի անդամներն ունեն տարբեր ընդունակություններ, անմիջապես ընտրում են իրենց «առաջնորդին» և համախմբվելով նրա շուրջը, կատարում են տրված աշխատանքը: Խմբային աշխատանքի ժամանակ հստակ երևում է աշակերտների համագործակցությունը, գործողության մեջ են դրվում աշակերտների տեսական գիտելիքները:

Նման գործնական աշխատանքների մասին կարծիքս դրական է: Նույնիսկ ամենաթույլ կարողություններով սովորողը թեկուզ փոքր, բայց որոշակի ներդրում կունենա տրված առաջադրանքը կատարելու գործում: Հիշեցնեմ, որ սակավ կարողություններով երեխան այն երեխան է , ով չի հասկացել դասը, կամ ընդհանրապես դժվարությամբ է գիտելիքներ ձեռք բերում, այլ այն երեխան, ով ունի զարգացման առանձնահատկություններ: Նման երեխաներին միշտ պետք է «կցել» իրենց հասկացող, աջակցել ցանկացող և համբերետար դասընկերների, նստեցնել նրանց կողքին, խրասուսել նրանց խմբային աշխատանքը և գնահատել: Խմբային գործնական աշխատանքը սովորողի մոտ զարգացնում է նաև այլ դրական որակներ: Ամենապասիվ երեխան, տեսնելով խմբում կատարվող «իրարանցումը», ինքն էլ փորձում է մասնակցել և առավելագույնս ներդնել սեփական ջանքերը թիմի առավելագույն արդյունքն ապահովելու համար: Այն զարգացնում է սովորողների ուշադրությունը, լսելու և հիշելու կարողությունը, պատասխանատվությունն ամբողջ թիմի առաջ, դաստիարակում է համբերատարություն, ընկերների հետ հարաբերվելու կարողություն: Երբեմն ուսուցիչը

գործնական աշխատանքների միջոցով կարողանում է լուծել բազմապիսի սոցիալական, միջանձնային խնդիրներ՝

• եթե դասարանում կան իրար հետ գժտված սովորողներ, ուսուցիչը նպատակադրված նրանց ներառում է նույն խմբում, օժտում նրանց հավասար լիազորություններով,

• հաճախ ունենում ենք կաշկանդված սովորողներ, որոնք ըստ արժանվույնս չեն կարողանում ի ցույց դնել իրենց գիտելիքները: Նման սովորողներին կարելի է տալ առաջնորդի կարգավիճակ,

• ուսուցիչը սովորողներին բացատրում է, որ աշխատանքը թիմային է, և մեկ աշակերտի ունեցած թերացումը բերում է թիմի թերացմանը: Ուստի ուսուցիչը նպատակադրված թիմում ներառում է տարբեր կարողություններով երեխաների: Այս պարագայում ուժեղ կարողութամբ աշակերտը բարձր արդյունք ունենալու նպատակով լրացնում է ընկերոջ բացթողումները:

Համագործակցության, դրական փոխկախվածության ապահովման նպատակով կարելի է պատին փակցնել պաստառ՝ հետևյալ բովանդակությամբ.

Օրինակ՝ **Համագործակցային փոխհարաբերության չափորոշիչներ**

• Լարվածությունը մեղմե՛ք և սիրալի՛ր եղեք:

• Հետևե՛ք, որ ձեր շարժուձևը դրական տրամադրվածություն արտահայտի:

• Մի մոռացեք հայացքով կապ հաստատել մյուսների հետ:

• Լսեք դիմացինին և ձեր մտքերն արտահայտեք հերթով:

• Դրական մեկնաբանություններ արե՛ք, քաջալերե՛ք և շնորհակալություն հայտնեք:

• Մյուսներին օգտակար եղեք, օգնե՛ք միմյանց:

• Ձեր անհամաձայնությունը հայտնեք բարեկիրթ ձևով:

• Առաջադրանքից մի՛ շեղվեք[1]:

Համագործակցային ուսուցման ժամանակ **կարևոր է** խմբի յուրաքանչյուր անդամի գիտակցումը, որ առաջադրանքը խմբով կատարելն ավելի արդյունավետ է, քան եթե փորձեն կատարել առանց համագործակցելու, ինչպես նաև՝ խմբի յուրաքանչյուր անդամի աշխատանքներին մասնակցելու հնարավորությունը

Գործնական աշխատանքը հիմնականում միտված է սովորողների գործնական մասնագիտական կարողությունները բացահայտելուն և զարգացնելուն: Գործնական աշխատանքի նշանակությունը ուսումնառության գործընթացում կարելի ձևակերպել հակիրճ. գործնական աշխատանքն օգնում է սովորողներին կիրառել իրենց տեսական գիտելիքները գործնականում, անմիջական դիտարկում անցկացնել ուսուցանվող երևույթի հանդեպ,

վերլուծել և սեփական ընդհանրական կարծիք կազմել առարկայի մասին: Գործնական աշխատանքի առավելությունն այն է, որ սովորողն ինքնուրույն է սովորում: Ոչ ոք չի ասում՝ այսպես դիտարկիր կամ սա հիշիր. պրակտիկայի ընթացքում սովորողը վերցնում է այն, ինչ իրեն առավել անհրաժեշտ և պետքական է համարում՝ զարգացնելով իր վերլուծական, ստեղծագործական կարողությունները: Գործնական աշխատանքի ընթացքում աշակերտները իրենք իրենց մեջ բացահայտում են նոր կարողություններ ու հմտություններ, և դա, ինչ խոսք, նպաստում է նրանց առաջընթացին:

Գործնական աշխատանքի տեսակներից է նաև դերային խաղը, որն ունի կիրառման լայն հնարավորություններ և կարելի է հաճախ կիրառել ուսումնական տարբեր առարկաների դասավանդման ընթացքում: Դերային խաղը լուրջ ու լայն հնարավորություններ է տալիս յուրաքանչյուր սովորողի իմացական և հուզակամային որակների զարգացման, քննադատական մտածողության, իրավիճակում կողմնորոշվելու, ինքնարտահայտվելու և ինքնադրսևորվելու համար:

Դերային խաղն իր մեջ ամփոփում է գործնական աշխատանքների բոլոր 3 տեսակների տարրեր:

- վերարտադրողական,
- որոնողական
- ստեղծագործական /.Համագործակցային ուսուցում, ձեռնարկ, Երևան, «Անտարես» 2006, հեղ.՝ Ա. Հովհաննիսյան և այլք/:

Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխատանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար, անհրաժեշտ է հանգամանորեն պլանավորել դերային խաղը՝ նախապես սահմանելով նպատակ, ձևակերպելով չափելի վերջնարդյունքներ:

Առանձնացվում է դերային խաղի 2 տեսակ՝ ուղղորդված և հանպատրաստից՝ դասակարգման հիմքում դնելով սովորողների ակտիվ կամ պասիվ որոշում կայացնելու հանգամանքը: Ուղղորդված դերային խաղի արդյունավետությունը ապահովելու համար դրանք պետք է լինեն մանրակրկիտ ծրագրված և լավ ուղղորդված: Կարևոր է առաջադրանքը սկսելուց առաջ անդրադառնալ հետևյալ հարցերին.

- Ինչի՞ն է նպաստում դերախաղի կազմակերպումը:
- Որո՞նք են դերախաղի նպատակն ու խնդիրները:/
- Որո՞նք են դերախաղի փուլերը:

Դերախաղերը սովորաբար իրականացվում են 3 փուլով՝

- նախապատրաստման,
- բուն խաղի,
- անդրադարձի։

1. Առաջին՝ նախապատրաստման փուլում քննարկվում են այն կանոնները, որոնք պետք է պահպանվեն դերային խաղի ընթացքում: Բաժանվում են դերերը, նշանակվում են դիտորդները և ստանում դիտարկման հստակ առաջադրանք։ Դերակատարները ստեղծում են համապատասխան միջավայր իրենց կերպարն ավելի արտահայտիչ դարձնելու համար, կահավորում են իրենց տարածքը համապատասխան նյութերով ու գործիքներով, ապահովում են անվտանգ աշխատանքը /տես դասի պլանը/։
2. Երկրորդ՝ բուն խաղի փուլում խաղացողները ստանձնում են իրենց դերերը և կատարում դրանք՝ կախված իրավիճակից՝ կիրառելով ձեռք բերված հմտությունները։ Մյուսները կատարում են իրենց դիտորդական հանձնարարությունը։
3. Երրորդ՝ անդրադարձի փուլում խաղացողներն առաջին հերթին արտահայտում են խաղի ընթացքում իրենց ունեցած զգացմունքները։ Դիտորդները ներկայացնում են իրենց դիտարկումները։ Հետո խոսվում է դերախաղի ժամանակ կայացրած որոշումների ու գործողությունների մասին, և աշխատանքն ամփոփվում է եզրակացություններով։

Ցանկացած դերախաղի համար կան հստակ կանոններ, որոնց պահպանումը հնարավորություն կտա արդյունավետ աշխատելու և հետագայում էլ բարելավելու արդյունքները, ինչն էլ հենց ձևավորող գնահատման նպատակն է։ Այդ կանոններից են, օրինակ, որ ուսուցիչը ակտիվ դեր չի խաղում դերային խաղի մեջ։ Նա հոգ է տանում, որ մասնակիցները պահպանեն սահմանված կանոնները, հետևում է ընթացքին և անհարկի չի միջամտում դերախաղին։ Կամ՝ որ մասնակիցները որևէ դեր ստանձնելու պարտավորություն չունեն, կարող են ընտրել դեր կամ լինել դիտորդ։ Կարևոր կանոն է, որ սովորողները հստակ տարանջատեն խաղի կերպարին դերակատարից և այլն։

Դերախաղի արդյունավետությունը ապահովելու համար հարկավոր է, որ ուսուցիչը հասկանալի և պարզ ձևակերպի խաղի հրահանգները, դերերի վերաբերյալ ցուցումները շարադրի այնպես, որ սովորողները անձնական նախաձեռնության հնարավորություն ունենան։ Միաժամանակ այնպիսի պահանջներ դնի, որոնք կնպաստեն դերախաղի միջոցով ուսումնական նպատակին հասնելուն, խաղն ընտրի տարիքային խմբին համապատասխան, նախապատրաստի համապատասխան պարագաներ և այլն։

Բնականաբար, պետք է պատրաստ լինել, որ դերախաղը միշտ չէ, որ հարթ է անցնելու, հնարավոր է, որ կլինեն որոշակի դժվարություններ: Օրինակ՝ սովորողները կարող են կաշկանդվել խաղի ժամանակ: Այս դեպքում անհրաժեշտ է նրանց ազատել սխալվելու վախից: Առաջադրանքին ընտելանալու համար սովորողներին որոշակի ժամանակ է անհրաժեշտ և կարիք չկա նրանց վրա ճնշում գործադրելու: Եթե դերախաղերը պարբերաբար կազմակերպվեն, բոլոր սովորողները աստիճանաբար կգիտակցեն դրանց կարևորությունը: Հնարավոր է, որ սովորողները թերահավատորեն մոտենան դերախաղերին: Պետք է նրանց բացատրել դերախաղերի կարևորությունը նաև ապագայում մասնագիտական հմտություններ ձեռք բերելու հարցում: Դերախաղի արդյունքում սովորողը կգիտակցի յուրաքանչյուր դերի նշանակությունն ու կարևորության աստիճանը:

Աշխատանքում ճիշտ արդյունք ունենալու համար անհրաժեշտ է կատարել ճիշտ գնահատում:

Գործնական աշխատանքը գնահատման արդյունավետ տեսակ է համարվում, յուրաքանչյուր գործնական աշխատանք պետք է գնահատվի, կարևոր չէ այն խմբային աշխատանք է, դերային խաղ, թե փորձ: Ըստ մանկավարժահոգեբանական ընդհանուր մոտեցման՝ գնահատականը պետք է լինի ուսումնական մոտիվացիա առաջացնող գործոն, որը մեծապես ազդում է երեխայի ընդհանուր զարգացման վրա:

«Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի մոտ կարողունակության զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների, չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների և հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման»[2]:

Գործնական աշխատանքի գնահատումն իրականացվում է բոլոր այն չափանիշներին համապատասխան, որոնք սահմանված են բանավոր խոսքի համար: Յուրաքանչյուր գործնական աշխատանք գնահատելիս հաշվի են առնվում.

- տրված գործնական առաջադրանքին բնորոշ ընդհանրացումների, գաղափարների ու փաստերի ըմբռնման աստիճանը,
- նորովի կամ ստեղծագործական մոտեցումը,
- առաջադրանքի համար անհրաժեշտ գործողություններ կատարելու կարողությունը,
- գործողությունների արդյունքները վերլուծելու և հաղորդելու կարողությունը:

Կարևոր է պահպանել գնահատման բաղադրիչների ամբողջականությունն ու հաջորդականությունը: Միշտ պետք է հիշել հետադարձ կապի մասին. առհասարակ ցանկացած աշխատանքից հետո անհրաժեշտ է քննարկել արդյունքները, որպեսզի սովորողները հնարավորություն ունենան արժևորելու աշխատանքի ստեղծագործական և ինքնատիպ մոտեցումները և շտկեն բացթողումները /Հանրակրթության պետական չափորոշիչ, հավելված n 2 ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման/:

Խմբային գործնական աշխատանքի գնահատման ամենաարդյունավետ տարբերակներից է ինքնագնահատումը, որը հնարավորություն տալ սովորողին նախ գնահատելու իրեն, ապա մյուսներին՝ հիմնավորելով գնահատականը:

Այժմ դիտարկենք գործնական աշխատանքի օրինակ, որը կարելի է անցկացնել դասի ժամանակ դերախաղի միջոցով.

Դասի պլան

Առարկա՝ Տեխնոլոգիա

Դասարան՝ 7-րդ

Թեմա՝ Հագուստի պատրաստման տեխնոլոգիա / դետալների միացում/

Դասի տիպը՝ Ամփոփիչ դաս

Դասի նպատակը

• Սովորողներին ներկայացնել հագուստի նշանակությունը մարդու կյանքում, դրանց ներկայացվող պահանջները, պատրաստման տեխնոլոգիան, մասնավորապես՝ ամրապնդել դետալների միացման գործողությունների իմացությունը:

• Սովորեցնել խնամքով պահել հագուստը:

Վերջնարդյունք

- կկարողանան անվանել և ճիշտ գործածել կարելու համար անրաժեշտ պարագաներն ու գործիքները,
- կամրապնդեն իրենց ունեած գիտելիքները գործվածքի ու թելերի տեսակների մասին,
- կտարբերակեն կարի տեսակները,
- կիմանան հագուստի գծագրի կառուցումն ու մոդելավորումը
- կկարողանան կարել պարզ գոգնոց՝ կառուցել գծագիրը, ձևել գործվածքը, միացնել դետալները բլանդ կարի ու կարի մեքենայի օգնությամբ:

Անհրաժեշտ նյութեր՝ Թուղթ, մատիտ, կավիճ, քանոն, մետր, գոգնոցի նմուշ-օրինակ, թել, ասեղ, գործվածք, կարի մեքենա, արդուկ, տեխնոլոգիական քարտ / տեխնոլոգիական քարտերը կներկայացվեն ստորև/

Կիրառվող մեթոդներ՝ Տեխնոլոգիական քարտերի կիրառում, խոսքային և դերախաղի մեթոդներ

Դասի ընթացքը

Դասի սկզբում ուսուցիչը կներկայացնի դասի թեման, դասի նպատակները, այդ նպատակին հասնելու ուղիները: Դասը կանցկացվի դերախաղի մեթոդով: Կներկայացվեն ընդհանուր կանոնները, սովորողներից յուրաքանչյուրին կտրվի իր դերը՝ գործվածքը տեսակավորող, ձևող, արդուկող, կարող, փաթեթավորող /որոնց արդեն ծանոթ են սովորողները/: Դերակատարները կստեղծեն համապատասխան միջավայր իրենց կերպարն ավելի արտահայտիչ դարձնելու համար, կկահավորեն իրենց տարածքը համապատասխան նյութերով ու գործիքներով, կապահովեն աշխատանքի անվտանգությունն ու սանիտարահիգիենիկ պայմանները: Կնշանակվի նաև դիտորդ կամ դիտորդներ, ժյուրի / որպես դիտորդ դերը կարող է տրվել նաև ուսուցչին/, որոնց կտրվի հստակ առաջադրանք : Կներկայացվի նաև ավարտը՝ անդրադարձի փուլը:

Յուրաքանչյուր դերակատար նշելու է իր կերպարի կարևորությունը, տվյալ մասնագիտության անհրաժեշտությունը և առանձնահատկությունները:

Անդրադարձի փուլում խաղացողներն, առաջին հերթին, կարտահայտեն խաղի ընթացքում իրենց ունեցած զգացմունքները: Դիտորդները կներկայացնեն իրենց դիտարկումները: Հետո կխոսվի դերախաղի ժամանակ կայացրած որոշումների ու գործողությունների մասին, և աշխատանքը կամփոփվի եզրակացություններով: Արդյունքում կունենան գեղեցիկ գոգնոց, որի պատրաստման աշխատանքներին մասնակցել են դասարանի բոլոր աշակերտները:

Գնահատման փուլ

Դասի ընթացքում կկիրառվեն գնահատման այլընտրանքային ձևեր, սովորողները կգնահատեն մեկը մյուսի աշխատանքը՝ կարևորելով նախորդ մասնակցի աշխատանքը իր աշխատանքի դրական արդյունքի հասնելու գործում:

Սովորողներին կներկայացվեն օգտագործվող գործվածքների նմուշներ և կարատեսակներ, գոգնոցի մշակման 2 տեխնոլոգիական քարտեր /**Օգտագործվող գործվածքների նմուշները տես՝ ստորև/:**

Այնուհետև կամփոփվի դասը նախապես կազմված հարցերի հիման վրա՝ անդրադարձ կատարելով նպատակին, վերջնարդյունքներին: Հտրամադրվի հետադարձ կապ:

Օգտագործվող գործվածքների տեսակները

Օգտագործվող կարատեսակներ





ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ԳՈԳՆՈՑԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՔԱՐՏ









ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրականացնելով թեմայի շուրջ մեթոդական գրականության վերլուծություն, կարելի է եզրակացնել, որ.

- Գործնական աշխատանքի ժամանակ սովորողները գիտելիքներ են ձեռք բերում ոչ միայն ուսուցչի օգնությամբ, այլև ինքնուրույնաբար և պասիվ ընկալողից վերաճում հայտնագործողի և գիտելիքների ձեռքբերման ակտիվ մասնակցի:
- Թեպետ գործնական աշխատանքի կազմակերպումն ու գնահատումը բնույթով բարդ է կրթական կարիքներ և զարգացման առանձնահատկություններ ունեցող սովորողների համար և ուսուցչից պահանջում է հավելյալ ջանքեր, կազմակերպչական մեծ աշխատանքներ, հավելյալ ժամանակի տրամադրում, այնուամենայնիվ, չի կարելի բացառել գործնական աշխատանքների արդյունավետությունը, հատկապես տարբեր կարողություններ ունեցող սովորողների ուսումնառության գործընթացում:
- Գործնական աշխատանք կատարելիս, յուրաքանչյուր սովորող, նախ և առաջ, պետք է հստակ պատկերացնի իր անելիքները, պլանավորի գործողությունների ընթացքը, ցուցաբերի ինքնուրույնություն, արտահայտի իր մտքերը, կարծիքն ու դիրքորոշումը, իրեն զգա թիմի լիարժեք անդամ, հաղորդակցվի և կարողանա ներկայացնել իր կատարած աշխատանքը, երբեմն էլ սովորողից վերածվի սովորեցնողի:

Եվ, թեև, հաշվի առնելով այն փաստը, որ սովորողները, կախված իրենց առանձնահատկություններից ունենում են մտավոր ու ֆիզիկական տարբեր կարողություններ, կրթական ամենատարբեր կարիքներ /հատկապես՝ հատուկ / օժանդակ/ դպրոցում, որտեղ դասավանդում եմ/, գործնական աշխատանքը որպես ինքուրույն աշխատանք դիտարկելն ու կատարելը բերում է մեծ դժվարությունների, այնուամենայնիվ, գործնական աշխատանքները դրական ազդեցություն են ունենում սովորողների հաղորդակցման, համագործակցության, ընդհանուր նպատակին հասնելու, թիմային աշխատանք կատարելու կարողությունների զարգացման գործում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, հավելված n 2 ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի N 439-ն որոշման

2.«Համագործակցային ուսուցում» ուսումնական ձեռնարկ, հեղ՝ Հովհաննիսյան Ա. և այլք, Երևան, «Անտարես» 2006

3. Տեխնոլոգիա առարկայի 7-րդ դասարանի դասագիրք